Արձանագրություն N 3
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/12-Ա ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 29 օգոստոսի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը,
Հանձնաժողովի անդամներ Գ. Մելիքսեթյանը, Ս. Ասրյանը, Ս. Միրոյանը, Ն. Ավետյանը, Կ. Սարգսյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/12-Ա ծածկագրով ընթացակարգի Արձանագրություն N2-ով արձանագրված մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի, հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

2022 թվականի օգոստոսի 19-ի N 2 արձանագրությամբ մասնակիցների կողմից նեկայացված փաստաթղթերում արձանագված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկվել են, բացառությամբ՝ <<Շահարտ>> և <<Թրենդ>> ՍՊԸ-ների.

<<Թրենդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նոր Հավելված 1.1 (սարքերի և սարքավորումների նկարագիր), որը ներկայացվել է ոչ ամբողջական՝ դրանում բացակայում են 1. Պոմպ 14D-6 իր մետաղական հիմքով, 2. Պոմպ 20D-6 իր մետաղական հիմքով, 3. Վակում պոմպ BBH-1.5 բնութագրերը:

<<Շահարտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ծավալաթերթ - նախահաշիվ, որում ընդամենը տողի արժեքը (199993.0 հազ. դրամ) պետք է լիներ ընդամենը շինարարական աշխատանքների (198106.09 հազ. դրամ) տողի արժեքի և չնախատեսված ծախսեր 1.5% տողի արժեքի գումարը, որը ծավալաթերթ-նախահաշվում սխալ է հաշվարկված:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/12-Ա ծածկագրով հրավերի 8.10 կետը <<Շահարտ>> և <<Թրենդ>> ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը մերժել:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/12-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը, հանձնաժողովը հրավերի մասնակից ընկերություններին՝ <<ՇՄՇ-23>> ԲԲԸ, <<Սուսմետ>> ՍՊԸ, <<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ, <<Գրիգորյան Շին>> ՍՊԸ, <<Երվադա>> ՍՊԸ, <<Մեդիսոն Էյբլ>> ՍՊԸ հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 01.09.2022 թվականին ժամը 11:30-ին, Ջրային կոմիտեի վարչական շենքում՝ նիստերի դահլիճ (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 01.09.2022 թվականին ժամը 11:30-ին, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում՝ նիստերի դահլիճ (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-6, դեմ-0

Նախագահ		Վ. Օհանջանյան
		Ս. Ասրյան
անդամներ		Գ. Մելիքսեթյան
		Կ. Սարգսյան
		Ն. Ավետյան
		Ս. Միրոյան
Քարտուղար		Ա. Սարգսյան